


ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՆՈՐ ՏԱՐՈՒԿՅ ՍԵՄԻՆ

Posted on December 24, 2021 by Keghart



Category: [Opinions](#)



Մեր Դարգել Դաւիթեան, Լուսաբաց, Թորոնթօ, 18 Դեկտեմբեր 2021

1965 թուականին, աշխարհահռչակ հայ երգահան Արամ Խաչատուրեան Չուիցերիա կը հրաւիրուի մաս կազմելու միջազգային երաժշտական մրցումի մը որպէս անդամ դատական մարմին: Այդ ժամանակ, 20-րդ դարու մեծանուն դերասան Չարլի Չափլըն 76 տարեկան էր և մենակեաց կեանք մը կ'անցներ ժընեւէն դուրս գտնուող վիլլայի մը մէջ: Խաչատուրեան անակնկալ հրաւեր մը կը ստանայ իրմէ զինք այցելելու: Այցելութեան ընթացքին և Քանի մը ժամ զրուցելէ ետք, Խաչատուրեան Չափլինէն կը խնդրէ բացատրել թէ ի՞նչ էր գաղտնիքը անոր տխուր դեմքի ետին: Փոքր ժպիտով մը, Չափլին Խաչատուրեանը կը տանի իր անձնական գրասենեակը և դարակի մը մէջէն կը հանէ սկաւառակներ, որոնք կը կրէին ջութակի վրայ Կոմիտասի երաժշտութիւնը: Չափլին կ'ըսէ թէ իր ամենէն նախընտրած երաժշտութիւնն է այդ մէկը և թէ զայն կը լսէ ամէն անգամ որ պետքը կը զգայ ներքին հանդարտութեան ու խաղաղութեան:

Մեզմէ քիչեր գիտեն թէ Չարլի Չափլին բարեպաշտական հիմնարկ մը կազմած էր 1920-ական թուականներուն, հայկական ցեղասպանութենէն ճողոպրած հայ որբերու հոգատարութեան համար, և ամբողջ Եւրոպան շրջագայելով կրցած էր հաւաքել մէկ միլիոն տուար (այսօրուայ արժէքով 15 միլիոն տուար) այդ նպատակին համար:

1988 թուականի Դեկտեմբեր ամսու ահաւոր երկրաշարժէն ետք աշխարհահռչակ ֆրանսահայ երգիչ Շարլ Ազնաւուր կ'այցելէ Հայաստան և աւերակներու վրայ կեցած իր շուրջը հաւաքուած խումբին կ'ըսէ, մենք ուժով ժողովուրդ ենք, ասկից ալ դուրս կ'ելլենք:

Վստահաբար ամէն սրտցաւ հայ անցեալ տարուայ մեր կրած պարտութենէն ետք կ'ապրի տեսակ մը մենակեաց իր պատեանին մէջ Չափլինի օրինակով, և պետքը կը զգայ ներքին հանդարտութեան ու խաղաղութեան: Ինչպէս նաև, Ազնաւուրի պէս կը հաւատայ որ մենք ուժով ժողովուրդ ենք և այս դժուար վիճակէն ալ դուրս կ'ելլենք:

Վստահաբար նաև ամէն հայ լքուած և անտեսուած կը զգայ ինքզինք քաղաքակիրթ կոչող աշխարհէ մը, որ ներկայիս Ուքրանիոյ կողքին ուժգին կը կանգնի ընդդէմ Ռուսիոյ, երբ տարի մը առաջ գլացաւ տալու Հայաստանին նման թիկունք, հոգատարութիւն և զօրակցութիւն ընդդէմ Ազրայէճանի և Թուրքիոյ:

Վստահաբար ամէն հայ ձեւով մը ցաւ և դառնութիւն կը զգայ իր ՄԻԱԿ ՎՍՏԱՀԵԼԻ դաշնակից Ռուսիոյ ՈՉ ՎՍՏԱՀԵԼԻ դիրքորոշումներէն, շնորհակալ ըլլալով հանդերձ անոր Արցախի անվտանգութիւնը ապահովող ներկայի խաղաղապահի դերէն:

Նոր տարուայ սեմին, առողջութեան, յաջողութեան և երջանկութեան մաղթանքներ պիտի փոխանակենք իրարու հետ աւելի լաւ կեանք մը և ապագայ մը ցանկալով: Թող որ ամէն հայ իր մաղթանքներուն մէջ ցանկայ որ գիտութեան ուժը Փաթափութեան և ԱՖԷԵԱՆ զոյքին տարածուի և ուրճանայ այնպէս որ նոր Փաթափութեաններ և ԱՖԷԵԱՆՆՆԵՐ ողողեն աշխարհը, Հայաստանին և հային տալով արժանապատուութիւն

Վերականգնելու և պահպանելու ուժն ու իրաւունքը:

Թող մեր «Թումօ» գիտական ուսման կեդրոնները Հայաստանի մէջ արտադրեն մտքեր, որոնք իրենց ճարտասանութեամբ մեր երկիրը դարձնեն այնպէս որ ապագային երբեք խոցելի չդառնայ թշնամիի կողմէն:

Թող մեր դեռատի սահմանապահ զինուորները անվտանգ տուն վերադառնան և «Մամ քան դուռը բաց, սրբիր աչքերդ թաց» ըսեն իրենց մայրերուն:

Թող որ թշնամիի մօտ գերիներ ունեցած ըլլալու ցաւով և ամօթով չապրինք:

Թող որ դադրինք աշխարհին ծաղր դառնալէ և վերջ դնենք Ազգային Ժողովի մէջ հայիոյանքի, ծեծկռտուքի և կռուի հանդեսներ սարքելէ::

Թող որ ծաղրի առարկայ չդարձնենք մեր հայրենի ժողովուրդի քաղաքական միտքն ու գիտակցութիւնը, երբ ան ժողովրդավարական ազատ կամքով և գիտակցութեամբ կ'ընտրէ իր իշխանութիւնը:

Թող որ իքնքիաւանութեամբ և ինքնասիրութեամբ ատելավառութիւն սերմանողները մեր համագգային սրտին և ոգիին մէջ քինախոյրութիւն յառաջացնելով չխոչընդոտեն մեր ազգային յառաջընթացը հայրենիքի և սփիւռքի էջ:

Թող որ մեր ժողովուրդին քթին խնդացող և ամբոխավառութեամբ գայն մոլորող մարդիկ պարկեշտութեան և ճշմարտութեան առջև խոնարհին, որպէսզի լրջութեամբ յաղթահարենք մեր ազգային կնճռոտ ու դժուար յետ-պատերազմեան խնդիրները:

Թող որ Սփիւռքի սիրտ կոչուող հայութիւնը Լիբանանի դառնայ ամբողջ հայութեան մտահոգութեան առարկան, որպէսզի ոտքի կանգնի և չընկրկի իր այս տնտեսապէս դժուար ու ճակատագրական օրերուն:

Թող որ Հայաստանի իշխանութիւնները ականջ տան ու մտիկ ընեն սփիւռքահայ կարող և գիտակից մտքերու խորհուրդներուն, որպէսզի մեր ազգի կարելիութիւնները լիովին օգտագործուին և շահագործուին յօգուտ մեր այսօրուայ վիրաւոր հայրենիքին:

Թող որ Ռուսիոյ ապահով հովանիին տակ անհոգ ապրի արցախահայութիւնը, ինչպէս որ ապրեցաւ անցեալին Սովետական Հայաստանը, մինչեւ որ Հայաստան դառնայ արդիական ռազմամթերքով հզօր բանակի տեր երկիր, բարեկամներէն յարգուած և թշնամիներուն սարսափ պատճառած իրավիճակով:

Թող որ ազգովին համախմբուինք և բռունցք ցոյց տանք թշնամիին, և եթէ անելորդ զոհողութիւններ տալու վիճակուիւնք, տա՛նք, բայց երբեք նորէն չզիջելու կամքով և պատրաստակամութեամբ, որովհետեւ մեր վիրաւոր արժանապատուութեան ճեղքը ոսկորին դպած է:

Եւ վերջապէս թող որ ամէն հայու ցաւը պակսի, տունը ծաղկի և կեանքը բարգաւաճի:

There are no comments yet.